

**«ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից
Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերում ռադիոռելեային
կապի գծերի կազմակերպման համար
14515/14935ՄՀգ, 14543/14963ՄՀգ, 14571/14991ՄՀգ, 22015/23023ՄՀգ,
22022/23030ՄՀգ, 22078/23086ՄՀգ, 22134/23142ՄՀգ ռադիոհաճախա-
կանությունների օգտագործման թույլտվության**

Պայմանները

**(Թույլտվություն N°, տրված Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի օգոստոսի -ի N°Ա որոշմամբ)**

1. Սահմանումներ

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացություններն են՝

- 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
- 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Կարգավորվող անձ՝ «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն.
- 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Կարգավորվող անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություններ օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.
- 4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կարգավորվող անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաս

սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կարգավորվող անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունն ուժի մեջ է մտնում 2018 թվականի օգոստոսի 2-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2028 թվականի մարտի 3-ը:

3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից Կարգավորվող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի և Լոռու մարզերում ռադիոռելեային կապի գծերի շահագործմամբ օգտագործել 14515/14935ՄՀց, 14543/14963ՄՀց, 14571/14991ՄՀց, 22015/23023ՄՀց, 22022/23030ՄՀց, 22078/23086ՄՀց, 22134/23142ՄՀց ռադիոհաճախականությունները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝

- 1) ռադիոռելեային կապի գծերի անվանումը, ռադիոռելեային կայանների տեղադրման վայրերը՝

h/h	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը		Ռադիոռելեային կապի գծի կայանների տեղադրման վայրերը	
	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5
1	GRN4	GRN1	Կոտայքի մարզ, գ. Գառնի	Կոտայքի մարզ, գ. Գառնիից դեպի արևելք
2	GGRD1	GRN1	Կոտայքի մարզ, Գեղարդ վանք	Կոտայքի մարզ, գ. Գառնիից դեպի արևելք
3	MDZ2	MDZ1	Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, ԱՀԿ	Կոտայքի մարզ, գ. Մեղրաձոր, հին ՀԱ մոտակայքում
4	ARVS1	SPe	Լոռու մարզ, գ. Արևաշող	Լոռու մարզ, ք. Սպիտակ, ԱՀԿ
5	NKH1	SPe	Լոռու մարզ, գ. Նոր Խաչակապից դեպի հյուսիս	Լոռու մարզ, ք. Սպիտակ, ԱՀԿ
6	CV1	OZe	Լոռու մարզ, գ. Չկալով, ՀԱ	Լոռու մարզ, գ. Օձուն, ԱՀԿ

7	TUM1	OZe	Լոռու մարզ, գ. Թումանյան	Լոռու մարզ, գ. Օձուն, ԱՀԿ
8	NSH3	NSH2	Լոռու մարզ, գ. Նորաշեն, ԱՀԿ	Լոռու մարզ, գ. Նորաշեն, ԱՀԿ
9	TRG1	AMe	Շիրակի մարզ, գ. Թորոսագյուղից դեպի հյուսիս	Շիրակի մարզ, գ. Ամասիա, ԱՀԿ
10	NK1	LSK1	Շիրակի մարզ, գ. Նոր կյանք, ԱՀԿ	Շիրակի մարզ, գ. Լուսակերտ
11	KTJ1	RS1	Լոռու մարզ, գ. Կաթնաջուր	Լոռու մարզ, գ. Սարահարթից դեպի արևմուտք
12	GDZ1	TSHV1	Արագածոտնի մարզ, գ. Գեղաձոր, ՀԱ	Արագածոտնի մարզ, գ. Ծաղկահովիտ, ԱՀԿ

2) աշխարհագրական կոորդինատները, բարձրությունը ծովի մակերևույթից՝

Հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը		Աշխարհագրական կոորդինատները		Բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	
	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5	6	7
1	GRN4	GRN1			1455	1470
2	GGRD1	GRN1			1803	1470
3	MDZ2	MDZ1			1805	2165
4	ARVS1	SPe			1789	1539
5	NKH1	SPe			1515	1539
6	CV1	OZe			1527	1091
7	TUM1	OZe			1206	1091
8	NSH3	NSH2			1592	1620
9	TRG1	AMe			2070	1877
10	NK1	LSK1			1624	1597
11	KTJ1	RS1			1691	1784
12	GDZ1	TSHV1			2201	2095

3) ռադիոռելեային կապի գծերի օգտագործման նպատակը՝ շարժական բջջային կապի բազային կայանների միջև կապի ստեղծում.

4) ռադիոռելեային կայանների տեսակը՝ թվային.

5) հատկացված ռադիոհաճախականությունները (հաղորդման)՝

Հ/հ	Ռադիոռելեային կապի գծի հատվածի անվանումը		Պահանջվող ռադիոհաճախականությունները (հաղորդման) (ՄՀց)	
	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5
1	GRN4	GRN1	23086	22078
2	GGRD1	GRN1	14515	14935
3	MDZ2	MDZ1	22022	23030
4	ARVS1	SPe	23023	22015
5	NKH1	SPe	14963	14543
6	CV1	OZe	14571	14991
7	TUM1	OZe	22078	23086
8	NSH3	NSH2	22022	23030
9	TRG1	AMe	14571	14991
10	NK1	LSK1	22134	23142
11	KTJ1	RS1	23142	22134
12	GDZ1	TSHV1	23086	22078

6) Հաղորդչի հզորությունը, ճառագայթման դասը, թվային տեղեկատվության հաղորդման արագությունը

Հ/հ	Ռադիոտեղեկային կապի գծի հատվածի անվանումը		Հաղորդչի հզորությունը (Վտ)	Ճառագայթման դասը	Տեղեկատվության հաղորդման արագությունը (ՄԲ/վ)
	կայան 1	կայան 2			
1	2	3	4	5	6
1	GRN4	GRN1		16M0F7D	100
2	GGRD1	GRN1		16M0F7D	100
3	MDZ2	MDZ1		16M0F7D	100
4	ARVS1	SPe		16M0F7D	100
5	NKH1	SPe		16M0F7D	100
6	CV1	OZe		16M0F7D	100
7	TUM1	OZe		16M0F7D	100
8	NSH3	NSH2		16M0F7D	100
9	TRG1	AMe		16M0F7D	100
10	NK1	LSK1		16M0F7D	100
11	KTJ1	RS1		16M0F7D	100
12	GDZ1	TSHV1		16M0F7D	345

7) անտենաների տեսակը, բարձրությունը երկրի մակերևույթից, տրամագիծը, ուժեղացման գործակիցը`

Հ/հ	Ռադիոտեղեկային կապի գծի հատվածի անվանումը		Անտենայի տեսակը		Բարձրությունը երկրի մակերևույթից (մ)		Անտենայի տրամագիծը (մ)		Ուժեղացման գործակիցը (դԲ)	
	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2	կայան 1	կայան 2
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	GRN4	GRN1	UKY 220 69/SC15	UKY 220 69/SC15	15	11	0.3	0.3	34.9	34.9
2	GGRD1	GRN1	UKY 220 43/SC15	UKY 220 43/SC15	16	12	0.6	0.6	37.4	37.4
3	MDZ2	MDZ1	UKY 220 69/SC15	UKY 220 69/SC15	15	15	0.3	0.3	34.9	34.9
4	ARVS1	SPe	UKY 220 69/SC15	UKY 220 69/SC15	15	8	0.3	0.3	34.9	34.9
5	NKH1	SPe	UKY 220 43/SC15	UKY 220 43/SC15	8	30	0.6	0.6	37.4	37.4
6	CV1	OZe	UKY 220 43/SC15	UKY 220 43/SC15	30	20	0.6	0.6	37.4	37.4
7	TUM1	OZe	UKY 220 45/SC15	UKY 220 45/SC15	7	13	0.6	0.6	40.1	40.1
8	NSH3	NSH2	UKY 220 69/SC15	UKY 220 69/SC15	14	10	0.3	0.3	34.9	34.9
9	TRG1	AMe	UKY 220 43/SC15	UKY 220 43/SC15	10	11	0.6	0.6	37.4	37.4
10	NK1	LSK1	UKY 220 45/SC15	UKY 220 45/SC15	18	15	0.6	0.6	40.1	40.1
11	KTJ1	RS1	UKY 220 45/SC15	UKY 220 45/SC15	8	15	0.6	0.6	40.1	40.1
12	GDZ1	TSHV1	UKY 220 45/SC15	UKY 220 45/SC15	25	20	0.6	0.6	40.1	40.1

5. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոհաճախականություններն օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:

4. Կարգավորվող անձի գործունեությունը

6. Կարգավորվող անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
7. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
8. Կարգավորվող անձը պարտավոր է Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման տեխնիկական նախագծերը՝ երկու օրինակից: Տեխնիկական նախագիծը պետք է ընդգրկի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 18-ի №30Ն որոշմամբ հաստատված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի տեխնիկական նախագծում ընդգրկվող փաստաթղթերի ցանկի 8-րդ և 9-րդ կետերը:
9. Թույլտվության 8-րդ կետով նախատեսված տեխնիկական նախագծերի ներկայացումից հետո թույլտվության պայմանները կարող են փոփոխվել:
10. Կարգավորվող անձը պարտավոր է իր նախաձեռնությամբ Թույլտվության պայմանների 4-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված ռադիոռելեային կապի գծերի կազմակերպման տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:
11. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոռելեային կապի գծի շահագործումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:
12. Կարգավորվող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) նկատմամբ իրավունքի օտարում կամ այլ կերպ փոխանցում կամ զիջում կամ գրավադրում կամ այդ անձի

գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կանխորոշելու հնարավորություն ունեցող անձի փոփոխություն կարող է իրականացվել միայն Հանձնաժողովի համաձայնությունը Կարգավորվող անձի կողմից ստանալուց հետո:

13. Կարգավորվող անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականությունների արդյունավետ օգտագործումը:
14. Կարգավորվող անձը պարտավոր է իր տնօրինության կամ տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:
15. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ Հանձնաժողովի կողմից կարգավորվող գործունեությանն առնչվող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
16. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման վճարները և եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:
17. Կարգավորվող անձը պարտավոր է իր վերականգնման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
18. Կարգավորվող անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:
19. Կարգավորվող անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
20. Կարգավորվող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Կարգավորվող անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»: Կարգավորվող անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին:

Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Կարգավորվող անձի խնդրանքը:

21. Կարգավորվող անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

5. Գործունեության վերահսկում

22. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
23. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Կարգավորվող անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Կարգավորվող անձը պարտավոր է աջակցել Հանձնաժողովին:
24. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

6. Պատժամիջոցներ

25. Կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

- 1) տույժերի և տուգանքների կիրառում,
- 2) Թույլտվության փոփոխում,
- 3) Թույլտվության կասեցում,
- 4) Թույլտվության գործողության դադարեցում:

26. Կարգավորվող անձը Թույլտվության 25-րդ կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում

27. Ռադիոռելեային կապի գծերի շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Կարգավորվող անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

28. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

29. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Կարգավորվող անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

30. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոռելեային կապի գծերի շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացնել շինարարական նախագծին, ինչպես նաև տվյալ բնագավառում Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և իրավական ակտերին համապատասխան:

31. Թույլտվության գործողությունը կարող է դադարեցվել Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

9. Ծանուցում

32. Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Կարգավորվող անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով: